



## ՆՈՐԻՆ Ս. ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Ձ Գ Ե Ն Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1955 թվականի սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը, իր սեպտեմբերի 30-ի երկրորդ նիստում, արտահայտելով Հայրենի երկրի, Սովետական Միության և Սփյուռքի մեր թեմերի և ժողովրդի ցանկությունն ու իղձերը, Բվեների բացարձակ մեծամասնությամբ Ամենայն Հայոց Հայրապետ ընտրեց Ռուսինանայ և Բուլղարանայ թեմերի բարեխնամ առաջնորդ և Ս. Էջմիածնի գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ բարձրաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալեյանին:

Նորընտիր Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձր հոգևորականության շարքերում բացառիկ և ուրույն տեղ է գրավում իր համալսարանական բարձրագույն կրթությամբ, իր բազմակողմանի զարգացումով, բարեմույն և հեզաճամբույր բնավորությամբ, իր անկաշառ հայրենասիրությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կարգի և կանոնի, առաքելաճաստա ավանդությունների նախանձախնդրությամբ, Հայ Եկեղեցու հանդեպ իր ունեցած խորունկ սիրով և նվիրվածությամբ:

Անա թե ինչո՞ւ երբեք պատահականություն չէր այն բարձր վաստակունեն ու խորը, համազգային հարգանքն ու սերը, որը ցուցաբերվեց Ազգային-եկեղեցական պատկառելի համագումարում Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ընտրության կատակցությամբ:

Նորընտիր Հայրապետը մեր այժմյան ամենակարկառուն և նվիրված եկեղեցական դեմքերից մեկն է, որի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա մի նոր ու պայծառ էջ բաց է անելու մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, իր բարձր անձնավորության բարոյական և հոգեկան հազվագյուտ բարեմասնություններով, ժողովրդանվեր գործունեությամբ:

Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը (ավագանի անունը՝ Լևոն-Կարապետ) ծնվել է Ռուսինիայի մայրաքաղաք Բուխարեստում 1908 թվականի սեպտեմբերի 20-ին, կոչկակար արհեստավորի համեստ, ազգային-եկեղեցական ավանդություններով հարուստ և բարեպաշտ ընտանիքում: Նրա հայրը՝ Աբրահամը (բնիկ ոռոգասոցի) և մայրը՝ Սիրանուշը իրենց արդար վաստակով հագիվ են կարողացել հայթայթել իրենց ընտանիքի օրվա պարեներ: Բայց լինելով պարզ, հավատավոր ու հայրենասեր անձնավորություններ, իրենց հավատի, եկեղեցասիրության, հայրենասիրության և ճամեստության խորը կենիքն են դրել պատանի Լևոն-Կարապետի սրտի, հոգու ու մտքի վրա:

Մանուկ Լևոն-Կարապետի նախադպրոցական դաստիարակության գործում առանձնապես մեծ ազդեցություն է բոլոր նրա վրա իր հարազատ մայրը՝ Սիրանուշը, որը բնիկ աղբիանուպոլսեցի (էտիրենցի) էր, հարգված ամենէրից—բարի ու առաքինի, հավատացյալ ու ավանդապան մի կին, որն իր մայրա-

կան անխաղախ կաթի հետ իր սիրտուն զավակին է ավել հաև հավատի սրբազան հուրը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պաշտամունքը, ազգասիրտության շունչն ու ոգին:

Խոստումնալից և ուսումնասենչ Լևոն-Կարապետը իր ծնողների միակ ժառանգն էր: Նա իր միջնակարգ և բարձրագույն կրթությունը ստանում է Բուխարեստում, որտեղ ուսումնասենչ երիտասարդի առաջ բացվում են գիտության զարգացման դռները:

1936 թվականին նա փայլուն հաջողությամբ ավարտում է Բուխարեստի պետական համալսարանի փիլիսոփայության և գրականության ֆակուլտետը՝ մասնագիտությունը ընտրելով մանկավարժությունը: 1937 թվին ավարտում է նաև համալսարանի գործնական մանկավարժության բաժինը:

Քաղմկողմանիորեն զարգացած ու պատրաստված, խոստումնալից երիտասարդ համալսարանականի առաջ բացվում է կրթական-հասարակական գործունեության դժվարին, բայց պատվավոր ու շնորհընկալ ասպարեզ:

Միջնակարգ կրթությունն ստանալուց հետո, 1929 թվից մինչև 1943 թվը, նա ունեցել է բեղմնավոր ու հանրօգուտ գործունեություն Բուխարեստի հայ հասարակական-մշակութային կյանքում՝ իր ամբողջ գիտակցական կյանքն ու խորը գիտելիքները նվիրելով երիտասարդ նոր սերնդի հայեցի դաստիարակության գործին:

Այսօր ռումինահայ նոր սերնդի մեջ հազարների է հասնում թիվը այն ուսանողների, որոնք մայրենի լեզվի փառցությունը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սերը, Հայրենիքի ներշնչումը, մեր մշակույթի գեղեցկության նաշակը ստացել են Վեհափառ Հայրապետի ուսուցչության տարիներին, և որոնք երախտագիտության ամենաբնական զգացմունքներով կապված են իրենց սիրելի ուսուցչի հետ:

1943 թվին, զինված գիտությամբ և փորձառությամբ, մեծ եռանդով և ծառայության սրբազան ոգով, նա իր երիտասարդական ուժերը ընդմիշտ նվիրում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր ծառայության պատվավոր սպասին:

1943 թվի սեպտեմբերի 30-ին (նկատելի է, որ սեպտեմբեր ամիսը պատմական դեր է կատարել Վեհափառի կյանքում — սեպտեմբերի 20-ին ծնվել է, սեպտեմբերի 30-ին կուսակրոն ֆառանա է ձեռնադրվել և սեպտեմբերի 30-ին ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվել) Աթենքում, հանգուցյալ Կարապետ արքեպիսկոպոս Մազունյանից ձեռնադրվում է կուսակրոն ֆառանա, ապա ֆառասունքը անց է կացնում Սուլավայի պատ-

մական վանքում, և վերադառնալով Բուխարեստ, հետևում է օրբորոֆս աստվածաբանության բարձրագույն դասընթացներին: 1943 թվի դեկտեմբերի 1-ին ընտրվում է Ռումինահայ թեմի առաջնորդական փոխառորդ, էջմիածնի միաբան հանգուցյալ Ս. Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրաբյանի տեղորը վախճանվել էր 1942 թվի աշնանը:

Երիտասարդ և գիտնական Վազգեն վարդապետը իր նոր պաշտոնում մեծապես օգտակար է հանդիսանում իր թեմին:

Վազգեն վարդապետը, իր առաջնորդական փոխառորդի նոր պաշտոնում, իր շուրջ ստեղծում է մեծ հեղինակություն և պատկառանք, որպես պատրաստված, խոհուն, լուրջ ու համեստ հոգևորականի: Նա կազմակերպում է իր թեմի ազգային-եկեղեցական կյանքը, ֆաշալերում և գլխավորում է գաղութի ողջ ազգային-մշակութային, հասարակական կյանքը, զարկ է տալիս մայրենի լեզվի դասավանդմանն ու ուսուցմանը, հայրենասիրության, ազգային ոգու զորացմանը, սրտագին կապ է պահպանում Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարության և Ռումեն Օրբորոֆս Եկեղեցու և եկեղեցականության հետ, ամրապնդում է իր կապը Մայր Աթոռ Ս. էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ: Վազգեն վարդապետի առաջնորդական փոխառորդության և ապա առաջնորդության տարիներին Ռումինահայ թեմը և հայ գաղութը ապրում են Հայրենիքի սիրով և Հայ Եկեղեցու գաղափարով:

1948 թվին Ռումինահայ պատգամավորական ժողովը նրան ընտրում է առաջնորդ, իսկ Ազգիս հանգուցյալ Վեհափառ Հայրապետը, 1948 թվին, իր հայրապետական բարձր գնահատության արժանացնելով Վազգեն վարդապետի ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեությունը, Մայր Աթոռ Ս. էջմիածնում, Իր հայրապետական օրհնությամբ նրան շնորհում է ծայրագույն վարդապետի աստիճան: Վազգեն ծայրագույն վարդապետը հետագա տարիներում իր եռանդուն և նվիրված պաշտոնավարությամբ և ժողովրդանվեր, հայրենասեր գործունեությամբ արդարացնում է իր վրա դրված հայրապետական բարձր վստահությունն ու ֆաշալերությունը: Եվ անհա 1951 թվի հուլիսի 3-ին Գեորգ Զ. հանգուցյալ Կաթողիկոսը, մի անգամ ևս գնահատելով Վազգեն ծայրագույն վարդապետի եկեղեցական և հայրենասեր գործունեությունը, նրան եպիսկոպոս է ձեռնադրում այժմյան Ս. Նրոսաղեմի Պատրիարքական տեղապան Ս. Նիդիշե (այն ժամանակ վարդապետ) արքեպիսկոպոսի, Ս. Նրոսաղեմի միաբան Նորայր և Սուրեն վարդապետների հետ:

Երիտասարդ, շնորհալի Վազգեն եպիսկոպոսի ուսերի վրա դրվում է ծանր ու քաղցր մի նոր լուծ: Բայց նա դափնեհեծերի վրա հանգրստացող չէր: Նա իրեն հատուկ բժախբնդրությամբ, կորովով և անաղմուկ ու հանդարտ ծառայությամբ շարունակում է իր առաջնորդական գործը՝ հոգում իր բեմի ազգային-եկեղեցական կյանքի զարգացման, կազմակերպման:

1954 թվին, նորին Ս. Օծուրյուն Ս. Տ. Գեորգ Զ.ի մահից հետո Վազգեն սրբազանը ընտրվում է Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

1955 թվականի սեպտեմբերի 30-ին Ս. էջմիածնի Մայր Տանառում գումարված Ազգային-եկեղեցական մեծ ժողովը Վազգեն եպիսկոպոսին ընտրեց Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետ: Հոկտեմբերի 2-ին տեղի ունեցավ նորընտիր Կարողիկոս նորին Ս. Օծուրյուն Ս. Տ. Վազգեն Ա.ի օծումն ու գահակալությունը:

Փառավոր ու պատասխանատու է եղել Վազգեն Ա. Վեհափառի անցած կյանքի և գործունեության ուղին: Եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը Վեհափառի նկարագրի, կյանքի և գործունեության երկու հիմնական ազդակներն են հանդիսացել:

Իր գրական վաստակով էլ Վազգեն Կարողիկոսը իր արժանի և ուրույն տեղն է գրավում մեր ազգային-եկեղեցական մատենագրության մեջ:

Վազգեն Վեհափառի գրչին են պատկանում մի շարք արժեքավոր պատմա-բանասիրական աշխատություններ. «Մուսալեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ»

(վերլուծական փորձ), Բուխարեստ, 1940 թ. 62 էջ. «Երիմյան Հայրիկ որպես դաստիարակ», Բուխարեստ, 1943 թ., 158 էջ. «Մեր պատարագը — Հայաստանյայց Եկեղեցվո սուրբ պատարագի խորհուրդը բացատրված հավատացյալ ժողովուրդի համար», Բուխարեստ, 1945 թ., 104 էջ. «Նոսր Հայրենիքի մասին — Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Սրբազան Տեղալիկի վերջին շրջաբերական կոնդակով», Բուխարեստ, 1945 թ., 27 էջ. «Հայրենի արևին տակ», 1954 թ., 109 էջ: Վեհափառի անտիպ գործերից է մի շափազանց կարևոր գրական, բանասիրական ուսումնասիրություն, վեց գլուխներից բաղկացած, Գրիգոր Նարեկացու մասին, ուսմիներեն լեզվով՝ Նարեկի որոշ մասերի ուսմիներեն թարգմանությամբ:

Ռումիեական ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարությունը բարձր է գնահատել միշտ Ռումիեահայ բեմի և նրա արժանավոր առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոսի աշխատանքը այդ հյուրընկալ երկրում: Վազգեն սրբազանը անդամ էր Ռումիեական ժողովրդական Ռեսպուբլիկայի Խաղաղության ազգային կենտրոնական կոմիտեի և պարզևատրվել է ուսմեն բարձրագույն պետական «Ռեսպուբլիկական աստղ» շքանշանով:

Ռովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղբանեն է, որ Վազգեն Ա. Կարողիկոսի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա նոր ու խոստումնայինց մի էջ բաց անի մեր նորագույն ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

